ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 22.06.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2022/43

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի՝

Մասնակցությամբ՝

«Մեդէքսպերտ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ

Գ. Խաչատրյանի (լիազորագիր՝ տրված 14.06.2022թ.),

քննելով ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/31» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Մեդէքսպերտ» ՍՊԸ-ի կողմից 26.05.2022թ. ներկայացված և 27.05.2022թ. վարույթ ընդունված (հետայսու՝ ԳԲՔԱ-ՆԳ-2022/43 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. <u>«Մեդէքսպերտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Մեդէքսպերտ» ՍՊԸ-ն (հետայսու՝ Ընկերություն) 26.05.2022թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարություն»-ը բժշկական պարագաների գնման նպատակով հրապարակել է <<ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/31>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

20.05.2022թ.-ին Armeps համակարգով ուղարկել ենք հարցում և 23.05.2022թ.-ին ստացվել է պարզաբանում:

Ստորև մեջբերված է մեր հարցումը և ՀՀ ՊՆ պատասխանը:

Հարգելի գնահատող հանձնաժողով խնդրում ենք պարզաբանել՝

1. Արդյոք հրապարակված ընթացակարգի տեխնիկական բնութագրի 19 և 20 չափաբաժիններին բացի Ethicon Endo Surgery LLC ընկերության արտադրանքից նաև որևէ այլ արտադրողի ապրանք է համապատասխանում:

2. Եթե այո, ապա կոնկրետ որ արտադրողի ապրանքն է համապատասխանում ըստ Ձեզ:

Պարզաբանում N 1 և N 2՝

Հարգելի մասնակից

1. Հարցումներին ի պատասխան հայտնում ենք, որ հրավերում առկա 19 և 20-րդ չափաբաժինների ապրանքները նախատեսված են հոսպիտալներում առկա GEN11 գեներատորների աշխատանքի համար և օգտագործվում են միայն այդ գեներատորների հետ: Իսկ քանի որ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի հատկանիշները, ուստի տեխնիկական բնութագրում առկա տեղեկատվությունը ամբողջությամբ նկարագրում է ապրանքը և այն կարիքը, որի համար այն նախատեսված է:

2. Տվյալ ապրանքատեսակներն արտադրողների վերաբերյալ տեղեկատվություն առկա չէ:

<u>2. Բողոքի փաստացի և իրավական հիմքերը</u>

Հրապարակված ընթացակարգի 19 և 20-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերը կազմված են խտրական, դրանք ուղղորդված են դեպի մեկ արտադրող և բացառում են մրցակցությունը:

Հրապարակված ընթացակարգի ընթացակարգի 19 և 20-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերին համապատասխանում է միայն Ethicon Endo Surgery LLC ընկերության արտադրանքը:

ՀՀ ՊՆ կողմից տրված պարզաբանման մեջ նույնպես նշված է, որ «տվյալ ապրանքատեսակներն արտադրողների վերաբերյալ տեղեկատվություն առկա չէ:»:

Փաստացի հրապարակված ընթացակարգի տեխնիկական բնութագրին համապատասխանում է մեկ արտադրող, ինչը հակասում է ՀՀ կառավարության 04 մայիսի 2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված Կարգի 22-րդ կետով սահմանված հետևյալ պահանջին.

22. Գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝ բացառությամբ գնումը սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով կատարելու դեպքերի:

<u>3. Բողոքի պահանջը</u>

1. Պարտավորեցնել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/31» ծածկագրով գնանշման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/31» ծածկագրով գնանշման ընթացակարգի 19 և 20-րդ չափաբաժինները:

Այնուհետև՝ 14.06.2022թ., Ընկերության կողմից ներկայացվել է դիրքորոշում հետևյալ բովանդակությամբ.

«Ի պատասխան Ձեր աշխատակազմի կողմից 10.06.2022թ. ուղարկված ՊՆ դիրքորոշման հայտնում եմ հետևյալը

ՀՀ ՊՆ-ը թե պարզաբանման հարցման փուլում, թե մեր բողոքին ի պատասխան ուղարկված գրության մեջ հայտնում է, որ տեխնիկական բնութագրով նկարագրել է հենց Ethicon Endo Surgery LLC ընկերության արտադրանքը և դա հիմնավորում է նրանով, որ այդ ապրանքները նախատեսված են ՀՀ ՊՆ հոսպիտալներում առկա GEN11 գեներատորների աշխատանքի համար և օգտագործվում են միայն այդ գեներատորների հետ:

Կարդացողի մոտ տպավորություն է ստեղծվում, թե Մեդէքսպերտ ՍՊԸ-ն վիճարկում է GEN11 գեներատորների հետ համատեղելի լինելու պահանջը և ցանկանում է պայմաններ ստեղծել GEN11 գեներատորների հետ ոչ համատեղելի ապրանք մատակարարելու համար, մինչդեռ Մեդէքսպերտ ՍՊԸ-ն վիճարկում է ՀՀ ՊՆ աշխատակիցների կողմից գրված

տեխնիկական բնութագրի ուղղորդված և խտրական լինելը, մասնավորապես դրան ընդամենը մեկ արտադրող համապատասխանելը, այսինքն տեխնիկական բնութագիրը կարելի էր գրել այնպես, որ դրան համապատասխաներ առնվազը երկու արտադրող, որոնց ապրանքները միաժամանակ կլինեին համատեղելի ՀՀ ՊՆ հոսպիտալներում առկա GEN11 գեներատորների հետ, սակայն ՀՀ ՊՆ աշխատակիցները դրա փոխարեն այնպես են կազմել տեխնիկական բնութագիրը, որ դրան համապատասխանի միայն Ethicon Endo Surgery LLC ընկերության արտադրանքը: Դա նաև խոստովանում են հենց իրենք՝ ՀՀ ՊՆ աշխատակիցները, մասնավորապես երբ պարզաբանման հարցում ենք ուղարկել որպեսզի ստուգենք, թե բացի Ethicon Endo Surgery LLC արտադրողից էլ որ արտադրողն է համապատասխանում բնութագրին, նրանք հայտնել են, որ տվյալ ապրանքատեսակներն արտադրողների վերաբերյալ տեղեկատվություն իրենց մոտ առկա չէ:

Հարգելի պարոն Ներսիսյան, ցանկանում եմ հիշեցնել, որ նույն ապրանքատեսակի վերաբերյալ Մեդէքսպերտ ՍՊԸ կողմից 2021թ.-ին ներկայացված նույն համանման բողոքի ժամանակ ՀՀ ՊՆ-ից հայտնել էին, թե բնութագրին իբր համապատասխանող մեկ այլ արտադրող ևս կա, ինչը հետագայում հերքվեց մեր կողմից:

Այժմ ՀՀ ՊՆ-ն փոխել է մարտավարությունը և այլևս չի ձգտում ապացուցել, որ աշխարհում գոյություն ունեն իրենց բնութագրին համապատասխանող առնվազը երկու արտադրող: Դրա փոխարեն ՀՀ ՊՆ-ն որոշել է նկարագրել կոնկրետ ապրանք, հայտարարելով որ հենց այդ ապրանքն է իր կարիքը բավարարում, մոռանալով որ կարիքը բավարարելը անհրաժեշտ պայման է, բայց ոչ բավարար, այսինքն տեխնիկական բնութագրով պահանջվող ապրանքը ոչ միայն պետք է բավարարի ՀՀ ՊՆ կարիքներին, այլ դրան պետք է նաև համապատասխանի առնվազը երկու արտադրող: Փաստացի ՀՀ ՊՆ-ն միայն ներկայացնում է ապրանքի՝ իր կարիքներին բավարարելու հատվածը, իսկ նվազագույնը երկու արտադրողի համպատասխանելու պահանջը չի կատարում:

Այսօր ՀՀ-ում առկա են բազմաթիվ թե պետական, և թե մասնավոր բժշկական կենտրոններ, որտեղ շահագործվում են GEN11 գեներատորներ, այսինքն նույն մակնիշի գեներատորներ, ինչպես ՀՀ ՊՆ-ում, սակայն այդ բժշկական կենտրոններում արդեն մի քանի տարի է հաջողությամբ օգտագործվում են ոչ թե Ethicon Endo Surgery LLC արտադրողի հարմոնիկ ծայրադիրները, այլ մի քանի տարբեր արտադրողների: Ստացվում է, որ GEN11 գեներատորների հետ համատեղելի հարմոնիկ ծայրադիրներ

արտադրողներ փաստացի շատ կան, սակայն ՀՀ ՊՆ աշխատակիցները միտումնավոր այնպես են կազմել տեխնիկական բնութագիրը, որ միայն Ethicon Endo Surgery LLC արտադրողի ապրանքը համապատասխանի դրան, ինչն անթույլատրելի է և հակասում է ՀՀ կառավարության 04 մայիսի 2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված Կարգի 22-րդ կետով սահմանված պահանջին:

Եթե ՀՀ ՊՆ ներկայացուցիչները չեն կարողանում կազմել այնպիսի բնութագիր, որը կհամապատասխանի ՀՀ կառավարության 04 մայիսի 2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված Կարգի 22-րդ կետով սահմանված պահանջին, այսինքն չեն կարողանում նկարագրել այնպիսի ապրանք, որը միաժամանակ նաև համատեղելի կլինի ՊՆ-ում շահագործվող GEN11 գեներատորների հետ, ապա մեր ընկերությունը պատրաստ է անվճար տրամադրել խորհրդատվություն:

Ելնելով վերոգրյալից, պնդում ենք մեր բողոքն ամբողջությամբ՝ պարտավորեցնել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/31» ծածկագրով գնանշման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/31» ծածկագրով գնանշման ընթացակարգի 19 և 20-րդ չափաբաժինները»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 15.06.2022թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է վերը շարադրված բողոքը:

<u>2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 02.06.2022թ. թիվ ՊՆ/02/2635-2022 գրությամբ, բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

««ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/31» ծածկագրով ընթացակարգի շրջանակում «Մեդէքսպերտ» ՍՊ ընկերության կողմից թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2022/43 ծածկագրով բողոքի վերաբերյալ ներկայացնում եմ Պատվիրատուի դիրքորոշումը.

Մրցույթի հրավերի տեխնիկական բնութագրում առկա 19 և 20-րդ չափաբաժինների ապրանքները նախատեսված են կիրառել հոսպիտալներում առկա GEN11

էլեկտրադանակների միջոցով իրականացվող վիրահատությունների համար և օգտագործվում են միայն այդ գեներատորների հետ:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետը, այն է՝ «Գնման առարկայի բնութագրերը՝ 3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը», մեր կողմից տեխնիկական բնութագրում նկարագրված են հենց վերոհիշյալ գեներատորների ծայրադիրների չափորոշիչները»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 15.06.2022թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը, ովքեր իրենց հերթին պնդել են վերը շարադրված դիրքորոշումը:

<u>3. ԳԲՔԱ-ՆԳ-2022/43 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ԳԲՔԱ-ՆԳ-2022/43 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/31» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

2. Ընթացակարգի հրավերի հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագրով սահմանվել է հետևյալը.

Հ/հ	Անվանումը	Տեխնիկական հատկանիշը
19	GEN 11 էլեկտրադանակի ծայրադիր 25սմ բաց և լապորոսկոպիկ վիրահատությունների համար	Ծայրադիր բիպոլյար կոագուլյացիայի և դիսսեկցիայի համար որը նաև կոագուլացնում է ներառյալ մինչև 7 մմ տրամագծով անոթներ: Կիրառվում է բաց վիրաբուժական միջամտությունների ժամանակ: Ցողունի երկարությունը 25 սմ բրանշների ծայրից մինչև ցողունի պտտման հատվածը, ցողունի տրամագիծը 5մմ: Ցողունը պտտվում է 360 աստիճան ռոտացիոն օղակի միջոցով, որը տեղակայված է ցողունի և բռնակի միացման տեղում, ապահովում է արագ հասանելիություն մեկ ձեռքով աշխատելու պարագայում, ինչն էլ իր հերթին հեշտացնում է տեսանելիությունը և վիրահատվող հյուսվածքի հասանելիությունը: Բրանշների երկարությունը 20 մմ, ձևը թեք, որը մեծացնում է աշխատանքային տեսադաշտը: Բրանշների լայնությունը - 3մմ: Բրանշներից մեկի վրա առկա են ատրավմատիկ ատամիկներ, որոնք նպաստում են հյուսվածքների ֆիքսմանը: Ակտիվացիայի բացակայության դեպքում կարող է օգտագործվել որպես սեղմակ կամ գրասպեր: Ունի ներկառուցված սայր: Ակտիվացիան իրականացվում է կորպուսի վրա տեղակայված ձեռքի ակտիվացման կոճակի կամ ոտքի սեղմակի միջոցով: Ցողունը ունի հակափայլատակման մակերես: Հյուսվածքների տաքացումը սահմանափակվում է 100C աստիճանով: Բրանշի վրա առկա է պոլիմերային ձևավոր ծածկույթ որը կանխում է հյուսվածքների կպումը և նվազեցնում ծխահարումը աշխատանքի ժամանակ: Առկա է համակարգ որը կանխում է առանց կոագուլյացիայի հյուսվածքների հատումը: Բրանշները պետք է ունենան

		առբերման ատրճանակային բռնակ: Պետք է առկա լինեն ռետինե կամ սահումը կանխող այլ նյութից ներդիրներ՝ բրանշների առբերման բռնակի ներքին մակերեսի, ձեռքի ակտիվացման և ռոտացիոն օղակի վրա, որը կանխում է սահումը և օգնում բժշկի ձեռքի ճիշտ տեղակայմանը և նպաստում ծայրադիրով աշխատանքի ճշգրտությանը: Պետք է ունենա զգայական և ձայնային ինդիկացիա կոագուլացիոն ռեժիմի ակտիվացման և դանակի լրիվ դուրս բերման վերաբերյալ: Պետք է հնարավոր լինի՝ տեսնել սայրի շարժը աշխատանքային մասի ցանկացած դիրքում, աշխատել ինչպես ավտոմատ (կոագուլյացիոն ցիկլի ավտոմատ դադարեցում), այնպես էլ ձեռքի կոագուլյացիայի (առանց կոագուլացիոն ցիկլի ավտոմատ դադարեցման) ռեժիմներում: Պետք է հնարավոր լինի կատարել կոագուլացիա մեկ բրանշի միջոցով: Պետք է նախատեսված է լինի օգտագործել կարդիոստիմուլատոր ունեցող հիվանդների համար: Նախատեսված է միանգամյա օգտագործման համար, ենթակա չէ կրկնակի ախտահանման: Մատակարարվում է ստերիլ, գործարանային փաթեթավորմամբ:
20	GEN 11 էլեկտրադանակի ծայրադիր 35սմ բաց և լապորոսկոպիկ վիրահատությունների համար	Ծայրադիր բիպոլյար կոագուլյացիայի և դիսսեկցիայի համար որը նաև կոագուլացնում է ներառյալ մինչև 7 մմ տրամագծով անոթներ: Կիրառվում է բաց վիրաբուժական միջամտությունների ժամանակ: Ցողունի երկարությունը 35 սմ բրանշների ծայրից մինչև ցողունի պտտման հատվածը, ցողունի տրամագիծը 5մմ: Ցողունը պտտվում է 360 աստիճան ռոտացիոն օղակի միջոցով, որը տեղակայված է ցողունի և բռնակի միացման տեղում, ապահովում է արագ հասանելիություն մեկ ձեռքով աշխատելու պարագայում, ինչն էլ իր հերթին հեշտացնում է տեսանելիությունը և վիրահատվող հյուսվածքի հասանելիությունը: Բրանշների երկարությունը 20 մմ, ձևը թեք, որը մեծացնում է աշխատանքային տեսադաշտը: Բրանշների լայնությունը - 3մմ: Բրանշներից մեկի վրա առկա են ատրավմատիկ ատամիկներ, որոնք նպաստում են հյուսվածքների ֆիքսմանը: Ակտիվացիայի բացակայության դեպքում կարող է օգտագործվել որպես սեղմակ կամ գրասպեր: Ունի ներկառուցված սայր: Ակտիվացիան իրականացվում է կորպուսի վրա տեղակայված ձեռքի ակտիվացման կոճակի կամ ոտքի սեղմակի միջոցով: Ցողունը ունի հակափայլատակման մակերես: Հյուսվածքների տաքացումը սահմանափակվում է 100C աստիճանով: Բրանշի վրա առկա է պոլիմերային ձևավոր ծածկույթ որը կանխում է հյուսվածքների կպումը և նվազեցնում ծխահարումը աշխատանքի ժամանակ: Առկա է համակարգ որը կանխում է առանց կոագուլյացիայի հյուսվածքների հատումը: Բրանշները պետք է ունենան առբերման ատրճանակային բռնակ: Պետք է առկա լինեն ռետինե կամ սահումը կանխող այլ նյութից ներդիրներ՝ բրանշների առբերման բռնակի ներքին մակերեսի, ձեռքի ակտիվացման և ռոտացիոն օղակի վրա, որը կանխում է սահումը և օգնում բժշկի ձեռքի ճիշտ տեղակայմանը և նպաստում ծայրադիրով աշխատանքի ճշգրտությանը: Պետք է ունենա զգայական և ձայնային ինդիկացիա կոագուլացիոն ռեժիմի ակտիվացման և դանակի լրիվ դուրս բերման վերաբերյալ: Պետք է հնարավոր լինի՝ տեսնել սայրի շարժը աշխատանքային մասի ցանկացած դիրքում, աշխատել ինչպես ավտոմատ (կոագուլյացիոն ցիկլի ավտոմատ դադարեցում), այնպես էլ ձեռքի կոագուլյացիայի (առանց կոագուլացիոն ցիկլի ավտոմատ դադարեցման) ռեժիմներում: Պետք է հնարավոր լինի կատարել կոագուլացիա մեկ բրանշի միջոցով: Պետք է նախատեսված է լինի օգտագործել կարդիոստիմուլատոր ունեցող հիվանդների համար: Նախատեսված է միանգամյա օգտագործման համար, ենթակա չէ կրկնակի ախտահանման: Մատակարարվում է ստերիլ, գործարանային փաթեթավորմամբ:

3. Ընթացակարգի շրջանակներում «Մեդէքսպերտ» ՍՊԸ-ի կողմից 26.05.2022թ. ներկայացվել է բողոք, որով վերջինս վիճարկել է հրավերի պահանջ և խնդրել չկայացած հայտարարել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/31» ծածկագրով գնանշման ընթացակարգի 19-րդ և 20-րդ չափաբաժինները:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Մեդէքսպերտ» ՍՊԸ-ի կողմից 26.05.2022թ. ներկայացված բողոքը, ՀՀ պաշտպանության նախարարության դիրքորոշումը՝ կից փաստաթղթերով, «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/31» ծածկագրով ընթացակարգի հրավերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի համաձայն՝

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

(…):

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. ***Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:***

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

Օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝

(...)

4. ***Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ հրավերում կարող են կատարվել փոփոխություններ:*** Բաց մրցույթի դեպքում փոփոխություն կատարելու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում փոփոխություն կատարելու և դրանք տրամադրելու պայմանների մասին հայտարարություն է հրապարակվում տեղեկագրում, իսկ փակ մրցույթի դեպքում փոփոխությունները տրամադրվում են հրավեր ստացած մասնակիցներին:

5. Բաց մրցույթի հրավերում փոփոխություններ կատարվելու դեպքում հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը հաշվվում է այդ փոփոխությունների մասին տեղեկագրում հայտարարության հրապարակման օրվանից, իսկ փակ մրցույթի դեպքում՝

հրավերում կատարված փոփոխությունները հրավեր ստացած մասնակիցներին տրամադրվելու օրվանից:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝ բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված պայմաններով գնում կատարելու դեպքերի:

Այսպես, ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/31» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերի հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագրով սահմանվել է հետևյալը.

Հ/հ	Անվանումը	Տեխնիկական հատկանիշը
19	GEN 11 էլեկտրադանակի ծայրադիր 25սմ բաց և լապորոսկոպիկ վիրահատությունների համար	Ծայրադիր բիպոլյար կոագուլյացիայի և դիսսեկցիայի համար որը նաև կոագուլացնում է ներառյալ մինչև 7 մմ տրամագծով անոթներ: Կիրառվում է բաց վիրաբուժական միջամտությունների ժամանակ: Ցողունի երկարությունը 25 սմ բրանշների ծայրից մինչև ցողունի պտտման հատվածը, ցողունի տրամագիծը 5մմ: Ցողունը պտտվում է 360 աստիճան ռոտացիոն օղակի միջոցով, որը տեղակայված է ցողունի և բռնակի միացման տեղում, ապահովում է արագ հասանելիություն մեկ ձեռքով աշխատելու պարագայում, ինչն էլ իր հերթին հեշտացնում է տեսանելիությունը և վիրահատվող հյուսվածքի հասանելիությունը: Բրանշների երկարությունը 20 մմ, ձևը թեք, որը մեծացնում է աշխատանքային տեսադաշտը: Բրանշների լայնությունը - 3մմ: Բրանշներից մեկի վրա առկա են ատրավմատիկ ատամիկներ, որոնք նպաստում են հյուսվածքների ֆիքսմանը: Ակտիվացիայի բացակայության դեպքում կարող է օգտագործվել որպես սեղմակ կամ գրասպեր: Ունի ներկառուցված սայր: Ակտիվացիան իրականացվում է կորպուսի վրա տեղակայված ձեռքի ակտիվացման կոճակի կամ ոտքի սեղմակի միջոցով: Ցողունը ունի հակափայլատակման մակերես: Հյուսվածքների տաքացումը սահմանափակվում է 100C աստիճանով: Բրանշի վրա առկա է պոլիմերային ձևավոր ծածկույթ որը կանխում է հյուսվածքների կպումը և նվազեցնում ծխահարումը աշխատանքի ժամանակ: Առկա է համակարգ որը կանխում է առանց կոագուլյացիայի հյուսվածքների հատումը: Բրանշները պետք է ունենան առբերման ատրճանակային բռնակ: Պետք է առկա լինեն ռետինե կամ սահումը կանխող այլ նյութից ներդիրներ՝ բրանշների առբերման բռնակի ներքին մակերեսի,

		ձեռքի ակտիվացման և ռոտացիոն օղակի վրա, որը կանխում է սահումը և օգնում բժշկի ձեռքի ճիշտ տեղակայմանը և նպաստում ծայրադիրով աշխատանքի ճշգրտությանը: Պետք է ունենա զգայական և ձայնային ինդիկացիա կոագուլացիոն ռեժիմի ակտիվացման և դանակի լրիվ դուրս բերման վերաբերյալ: Պետք է հնարավոր լինի՝ տեսնել սայրի շարժը աշխատանքային մասի ցանկացած դիրքում, աշխատել ինչպես ավտոմատ (կոագուլյացիոն ցիկլի ավտոմատ դադարեցում), այնպես էլ ձեռքի կոագուլյացիայի (առանց կոագուլացիոն ցիկլի ավտոմատ դադարեցման) ռեժիմներում: Պետք է հնարավոր լինի կատարել կոագուլացիա մեկ բրանշի միջոցով: Պետք է նախատեսված է լինի օգտագործել կարդիոստիմուլատոր ունեցող հիվանդների համար: Նախատեսված է միանգամյա օգտագործման համար, ենթակա չէ կրկնակի ախտահանման: Մատակարարվում է ստերիլ, գործարանային փաթեթավորմամբ:
20	GEN 11 էլեկտրադանակի ծայրադիր 35սմ բաց և լապորոսկոպիկ վիրահատությունների համար	Ծայրադիր բիպոլյար կոագուլյացիայի և դիսսեկցիայի համար որը նաև կոագուլացնում է ներառյալ մինչև 7 մմ տրամագծով անոթներ: Կիրառվում է բաց վիրաբուժական միջամտությունների ժամանակ: Ցողունի երկարությունը 35 սմ բրանշների ծայրից մինչև ցողունի պտտման հատվածը, ցողունի տրամագիծը 5մմ: Ցողունը պտտվում է 360 աստիճան ռոտացիոն օղակի միջոցով, որը տեղակայված է ցողունի և բռնակի միացման տեղում, ապահովում է արագ հասանելիություն մեկ ձեռքով աշխատելու պարագայում, ինչն էլ իր հերթին հեշտացնում է տեսանելիությունը և վիրահատվող հյուսվածքի հասանելիությունը: Բրանշների երկարությունը 20 մմ, ձևը թեք, որը մեծացնում է աշխատանքային տեսադաշտը: Բրանշների լայնությունը - 3մմ: Բրանշներից մեկի վրա առկա են ատրավմատիկ ատամիկներ, որոնք նպաստում են հյուսվածքների ֆիքսմանը: Ակտիվացիայի բացակայության դեպքում կարող է օգտագործվել որպես սեղմակ կամ գրասպեր: Ունի ներկառուցված սայր: Ակտիվացիան իրականացվում է կորպուսի վրա տեղակայված ձեռքի ակտիվացման կոճակի կամ ոտքի սեղմակի միջոցով: Ցողունը ունի հակափայլատակման մակերես: Հյուսվածքների տաքացումը սահմանափակվում է 100C աստիճանով: Բրանշի վրա առկա է պոլիմերային ձևավոր ծածկույթ որը կանխում է հյուսվածքների կպումը և նվազեցնում ծխահարումը աշխատանքի ժամանակ: Առկա է համակարգ որը կանխում է առանց կոագուլյացիայի հյուսվածքների հատումը: Բրանշները պետք է ունենան առբերման ատրճանակային բռնակ: Պետք է առկա լինեն ռետինե կամ սահումը կանխող այլ նյութից ներդիրներ՝ բրանշների առբերման բռնակի ներքին մակերեսի, ձեռքի ակտիվացման և ռոտացիոն օղակի վրա, որը կանխում է սահումը և օգնում բժշկի ձեռքի ճիշտ տեղակայմանը և նպաստում ծայրադիրով աշխատանքի ճշգրտությանը: Պետք է ունենա զգայական և ձայնային ինդիկացիա կոագուլացիոն ռեժիմի ակտիվացման և դանակի լրիվ դուրս բերման վերաբերյալ: Պետք է հնարավոր լինի՝ տեսնել սայրի շարժը աշխատանքային մասի ցանկացած դիրքում, աշխատել ինչպես ավտոմատ (կոագուլյացիոն ցիկլի ավտոմատ դադարեցում), այնպես էլ ձեռքի կոագուլյացիայի (առանց կոագուլացիոն ցիկլի ավտոմատ դադարեցման) ռեժիմներում: Պետք է հնարավոր լինի կատարել կոագուլացիա մեկ բրանշի միջոցով: Պետք է նախատեսված է լինի օգտագործել կարդիոստիմուլատոր ունեցող հիվանդների համար: Նախատեսված է միանգամյա օգտագործման համար, ենթակա չէ կրկնակի ախտահանման: Մատակարարվում է ստերիլ, գործարանային փաթեթավորմամբ:

Ընթացակարգի շրջանակներում «Մեդէքսպերտ» ՍՊԸ-ի կողմից 26.05.2022թ. ներկայացվել է բողոք, որով վերջինս վիճարկել է հրավերի պահանջ և խնդրել չկայացած հայտարարել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/31» ծածկագրով գնանշման ընթացակարգի 19-րդ և 20-րդ չափաբաժինները:

Այսպիսով՝ «Մեդէքսպերտ» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով հայտնել է, որ հրապարակված ընթացակարգի տեխնիկական բնութագիրը՝ 19-րդ և 20-րդ չափաբաժինների մասով, կազմված է խտրական, այն ուղղորդված է դեպի մեկ արտադրող և բացառում է մրցակցությունը՝ վկայակոչելով Կարգի 22-րդ կետով սահմանված պահանջը, այն է՝ գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և

արտադրողներ և խնդրել չկայացած հայտարարել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/31» ծածկագրով գնանշման ընթացակարգը վերոնշված չափաբաժինների մասով:

Բողոքի փաստական հիմքերի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ Ընկերությունը վիճարկում է հրավերի պահանջ, մասնավորապես՝ Ընկերությունը նշել է, որ տեխնիկական բնութագիրը՝ 19-րդ և 20-րդ չափաբաժինների մասով, կազմված է խտրական, այսինքն՝ կարելի է ենթադրել, որ բողոքն ուղղված է Ընկերության հնարավոր մասնակցության խախտված իրավունքի վերականգնմանը:

Հետևաբար՝ նման պայմաններում անհասկանալի է բողոքով ներկայացված պահանջը, այն է՝ չկայացած հայտարարել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/31» ծածկագրով գնանշման ընթացակարգը 19-րդ և 20-րդ չափաբաժինների մասով, այն դեպքում, երբ գնումների մասին ՀՀ օրենսդրությունը նախատեսում է նաև հրավերում փոփոխություն կատարելու հնարավորություն:

Ավելին՝ Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի կայացնել այնպիսի որոշում, որով կպարտավորեցնի գնահատող հանձնաժողովին ընդունել համապատասխան որոշում:

Օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ հրավերում կարող են կատարվել փոփոխություններ: Բաց մրցույթի դեպքում փոփոխություն կատարելու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում փոփոխություն կատարելու և դրանք տրամադրելու պայմանների մասին հայտարարություն է հրապարակվում տեղեկագրում, իսկ փակ մրցույթի դեպքում փոփոխությունները տրամադրվում են հրավեր ստացած մասնակիցներին:

Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովի քարտուղարին ներկայացնել հիմնավորումներ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ առանց նշելու անունը-ազգանունը: Ներկայացված հիմնավորումներն ընդունելի համարվելու դեպքում գնահատող հանձնաժողովը սահմանված ժամկետում դրանցով պայմանավորված փոփոխություններ է կատարում հրավերում:

Այսինքն՝ «Մեդէքսպերտ» ՍՊԸ-ն ոչ միայն չի իրացրել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված հրավերում փոփոխություն կատարելու վերաբերյալ հիմնավորված պահանջ Պատվիրատուին ներկայացնելու իրավունքը, այլ նաև բողոքով ներկայացրել է պահանջ Ընթացակարգը 19-րդ և 20-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու վերաբերյալ, մինչդեռ նույն օրենսդրությամբ Ընկերության վերապահված է եղել իրավունք ներկայացնելու հրավերում փոփոխություն կատարելու պահանջ, որը վերջինիս կողմից նույնպես չի իրացվել:

Այսպիսով՝ հարկ եմ համարում արձանագրել, որ բողոքով ներկայացված պահանջի բավարարելը չի կարող հանգեցնել բողոքով բարձրացված խնդրի լուծմանը, այն է՝ Ընկերության հնարավոր մասնակցության ենթադրյալ խախտված իրավունքի վերականգնմանը, քանի որ ենթադրյալ խախտված իրավունքի վերականգնման, այն է՝ մասնակցության իրավունքն իրացնելու նպատակով Ընկերությունը կարող էր բողոքով ներկայացնել այնպիսի պահանջ, որը բավարարելու դեպքում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը կարող էր պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին հրավերում կատարել փոփոխություն:

Վերը շարադրված փաստական հանգամանքների ուժով՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը գալիս է այն եզրահանգման, որ Ընկերությունը ներկայացված բողոքով նպատակ է հետապնդում, ոչ թե վերականգնել իր ենթադրյալ խախտված իրավունքները, այլ ընդամենն Ընթացակարգի համապատասխան չափաբաժինները չկայացած հայտարարելով խաթարել Պատվիրատուի բնականոն աշխատանքը:

Այսինքն՝ գնումների գործընթացի բողոքարկումը չպետք է լինի ինքնանպատակ և գնումների գործընթացի անհարկի հետաձգման պատճառ հանդիսանա: Պետական գնումների անհրաժեշտությունը ուղղված է «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված պատվիրատու հանդիսացող մարմինների գործառույթների պատշաճ իրականացմանը, և այդ գործընթացների անհարկի հետաձգումները կարող են արհեստական խոչընդոտներ ստեղծել նշված մարմինների բնականոն գործունեության համար:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ «Մեդէքսպերտ» ՍՊԸ-ի կողմից 26.05.2022թ. բողոքով ներկայացված պահանջը հիմնավորված չէ և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Մեդէքսպերտ» ՍՊԸ-ի կողմից 26.05.2022թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**